Պայմանագրի կողմ

ՀՀ Քաղաքացի՝ Գասպարյան Ավգեն Արմենակի
Հասցե՝ ք. Երևան,Ֆրունզեի 8, բն.14

Անձ. AK 0476474, տրված 003 կողմից, 02.04.2010թ

ID բանկ, Հ/Հ11800046841300

Պատվիրատու

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«20» «12» 2018 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2018թ.
Պայմանագրի համարը՝ « »

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	Տեխնիկական անբնութագրի համառոտ շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման նենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Դատատեխնիկական կրկնակի փորձաքննություն, թիվ 12804216 քրեական գործ			1 քր. գործ		2018թ	80.0	20 բանկային օրվա ընթացքում
	Ընդամենը						**80.0**	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

Կ.Տ.

Ծառայությունը ընդունեց

ստորագրություն

Կ.Տ.

ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և ՀՀ Քաղաքացի՝ Գասպարյան Ավգեն Արմենակի(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2018 թ. Դեկտեմբերի 20 -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Դատատեխնիկական կրկնակի փորձաքննություն, թիվ 12804216 քրեական գործ	դրամ	1

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Գասպարյան Ավգեն
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

Գլխավոր կանխագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ

ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՆՈՒՆԸ

ԱՎԳԵՆ ԱՐՄԵՆԱԿԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՆԴԱՎԱՅՐ
24.07.1936

ԾՆՆԴԱՎԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է
02.04.2010

ՎԱՎԵՐՄԱՆ Է ՄԻՆՉԵՎ
02.04.2020

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
003

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ /SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE P | COUNTRY CODE ARM | PASSPORT No. AK0476474

SURNAME
GASPARYAN

NAME
AVGEN

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
24 JUL 1936

PERSONAL No

SEX
M

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
02 APR 2010

DATE OF EXPIRY
02 APR 2020

AUTHORITY
003

P<ARMGASPARYAN<<AVGEN<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<

AK0476474 8ARM3607248M2004024<<<<<<<<<<<<<<<00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

003

21 APR 2012

12 APR 2011

02.04.2010

ԵՐԱՇԽԻՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PASSPORT AND VISA SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կրկնակի դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին

29-ը հունիսի 2018թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Մ.Մաթևոսյանս, վերանայելով վարույթիս թիվ 12804216 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

2016թ. հոկտեմբերի 30-ին՝ ժամը 10:00-ին, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՕԿԿ-ից ոստիկանության Էրեբունու բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ Երևան քաղաքի Խաղաղ-Դոնի 23-րդ շենքի վերելակում մարդ է մնացել՝ ստանալով մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ նախապատրաստված նյութերի ընթացքում պարզվել է, որ 2016թ. հոկտեմբերի 30-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Խաղաղ-Դոնի 23-րդ շենքի վեցերորդ հարկից առաջին հարկ իջնելիս Ռիտա Դոդորյանի և նրա դուստր Մարինե Վարդանյանի կողմից վերելակը նստելու ժամանակ անսարքության պատճառով վերելակը դեպի ներքև է շարժվել, որի հետևանքով Ռ.Դոդորյանն ու Մ.Վարդանյանը ստացել են մարմանական վնասվածքներ:

2016թ. նոյեմբերի 04-ին՝ դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 12804216 քրեական գործը:

Քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ 2016թ. հոկտեմբերի 30-ին՝ ժամը 10-ի սահմաններում, Ռիտա Դոդորյանն ու նրա դուստր Մարինե Վարդանյանը Երևան քաղաքի Խաղաղ-Դոնի 23-րդ շենքի 1-ին մուտքի 6-րդ հարկից ցանկացել են վերելակով իջնել առաջին հարկ: Առաջինը վերելակի խցիկ է մտել Մարինե Վարդանյանը, իսկ նրա հետևից փորձել է խցիկ մտնել Ռիտա Դոդորյանը, Այդ պահին վերելակը բաց դռներով շարժվել է ներքև, Ռ.Դոդորյանն խցիկի տանիքի շեմի հատվածից ընկել է ներքև՝ մարմնի վերևի հատվածով մնալով խցիկի մեջ, իսկ մարմնի ներքևի մասով՝ խցիկից դուրս: Մ.Վարդանյանի օգնության կանչերին վրա հասած հարևանները բարձրացել են մեքենայական սրահ, ձեռքով կարապիկի վրա գտնվող ղեկանիվի միջոցով խցիկը բարձրացել են վերև, որի արդյունքում Ռ.Դոդորյանին դուրս են հանել և շտապօգնության բրիգադան վերջինիս տեղափոխել է <<Էրեբունի>> բժշկական կենտրոն: Ռ.Դոդորյանին օգնություն ցույց տալու ժամանակ Մարինե Վարդանյանը վնասել է իր աջ դաստակի 2-րդ մատը և ևս ստացել մարմնական վնասվածք:

Վերը նշվածը հիմնավորվել է տուժողներ Ռիտա Դոդորյանի և Մարինե Վարդանյանի, <<Արգիշտի>> համատիրության կառավարիչ Շուշանիկ Քալանթարյանի, նույն համատիրության աշխատակիցներ Գուրգեն Վարդանյանի և Արմեն Վարդանյանի, Երևան քաղաքի Խաղաղ-Դոնի 23-րդ շենքի 1-ին մուտքի բնակիչներ Մնացական Վարդանյանի, Արմեն Վարդանյանի, Արարատ Այվազյանի, Ժորա Վարդանյանի, Ռուբիկ Մաթևոսյանի, Աիդա Բեգզադյանի նույնաբովանդակ ցուցմունքներով և քրեական գործով ձեռք բերված այլ փաստական տվյալներով:

Տուժողներ Ռիտա Դոդորյանի և Մարինե Վարդանյանի ստացած մարմնական վնասվածքների առաջացման մեխանիզմը, ծանրության աստիճանը, վաղեմությունը և քննության համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզելու նպատակով որոշումներ են կայացվել դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին, որոնց կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնի փորձագետներին:

Համաձայն փորձագետի թիվ 2441 եզրակացության՝ Ռիտա Արարատի Դոդորյանի մարմնական վնասվածքները՝ աջ սրունք-թաթային հոդի շրջանի սալջարդ-պատռված վերքի, ձախ թոքի սալջարդի, ձախից բազմաթիվ կողոսկրերի, թիակոսկրի կոտրվածքների, աջից սրունքի ոսկրերի դիստալ մետաէպիֆիզի կոտրվածքների ձևով, հասցվել են բութ առարկաներով, հնարավոր է նշված ժամկետում և հանգամանքներում, և պատճառել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Համաձայն փորձագետի թիվ 0671 եզրակացության՝ Մարինե Մնացականի Վարդանյանի մարմնական վնասվածքն ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի տվյալների՝ աջ դաստակի 2-րդ մատի շրջանի սալջարդ պատռած վերքի ձևով, պատճառվել է բութ առարկայի ներգործությամբ, հնարավոր է նշված ժամանակին, որն առողջությանը պատճառել է թեթև վնաս, առողջության կարճատև քայքայումով:

Ստացվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության <<տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից տեխնիկական քննության եզրակացությունը՝ Երևան քաղաքի Խաղաղ-Դոնի 23-րդ հասցեում տեղի ունեցած դժբախտ դեպքի հետ կապված, համաձայն որի՝ հանձնաժողովը գտել է, որ դժբախտ դեպքի պատճառ հանդիսանում է վերելակի՝ բաց դռներով ներքև շարժվելը, որը հնարավոր է դռների էլեկտրական բլոկավորման հպակների վիճակի հսկման ռելեի շղթայում խափանման դեպքում:

Դեպքի իրական հանգամանքները, դժբախտ պատահարի պատճառները և քննության համար հետաքրքրություն ներկայացնող այլ հանգամանքներ պարզելու նպատակով որոշում է կայացվել դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության <<տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի փորձագետներին: Համաձայն փորձագետի թիվ 896

եզրակացության՝ դժբախտ դեպքի պատճառ հանդիսանում է վերելակի՝ բաց դռներով ներքև շարժվելը, որը հնարավոր է դռների էլեկտրական բլոկավորման հպակների վիճակի հսկման ռելեի շղթայում խափանման դեպքում: 2016թ. սեպտեմբերի 16-ին <<Արգիշտի>> համատիրության՝ վերելակի տեխնիկական վիճակի, զննման և անվտանգ շահագործման պատասխանատու Գուրգեն Վարդանյանի և վերելակի սարքին վիճակի պատասխանատու էլ. մեխանիկ Արմեն Վարդանյանի կողմից կատարված տեխնիկական զննման ժամանակ վերջիններս պարտավոր էին ստուգել վերելակի դռների էլեկտրական բլոկավորման հպակների վիճակի հսկման ռելեն և դրա շղթան, իսկ զննման ժամանակ կարող էին տեսնել և հայտնաբերել վերելակի դռների բլոկավորման խափանումը, եթե կա թերություն: 2016թ. նոյեմբերի 01-ին հանձնաժողովի կողմից իրականացված վերելակի զննման արդյունքում ստուգվել է խցիկի և հորանի դռների էլեկտրական բլոկավորումների վիճակը, դրանք գտնվել են աշխատունակ վիճակում, ինչի համար որ նախատեսված են: Փորձագետը միևնույն ժամանակ հանգել է այն հետևության, որ անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումների և Ռիտա Դոդորյանի, Մարինե Վարդանյանի կողմից մարմնական վնասվածքներ ստանալու միջև պատճառահետևանքային կապ չկա:

Այս կապակցությամբ հարցաքննվել է <<Արգիշտի>> համատիրության՝ վերելակի տեխնիկական վիճակի, զննման և անվտանգ շահագործման պատասխանատու Գուրգեն Վարդանյանը, ով ցուցմունք է տվել այն մասին, որ 2016թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իր և Արմեն Վարդանյանի կողմից ստուգվել է վերելակը ամբողջությամբ, այդ թվում վերելակի դռների բլոկավորումը, հպակների վիճակը, հսկման ռելեն և դրա շղթան, որոնցում խափանում կամ անսարքություն չի հայտնաբերվել, որի կապակցությամբ էլ իրենց կողմից կազմվել է վերելակի պարբերական տեխնիկական զննման ակտ, համաձայն որի վերելակը գտնվել է սարքին վիճակում և պիտանի է եղել հետագա շահագործման համար:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ վարույթն իրականացնող մարմինը 04.06.2017թ. ՀՀ քրեական դատավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու մասին:

10.07.2017թ. Երևան քաղաքի դատախազի կողմցի քննության է առնվել Ռիտա Դոդորյանի դիմում-բողոքը, որի արդյունքում հանգել է հետևության, որ նախաքննական մարմնի կողմից՝ թիվ 12804216 քրեական գործով նախաքննության ժամանակ, պարզաբանման ենթակա հարցի վերաբերյալ լրիվ ծավալով քննություն չի կատարվել և որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու և հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին:

26.07.2017թ. թիվ 12804216 քրեական գործն ուղարկվել է ՀՀ ՔԿ ԵՔ ՔՎ Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում <<Արգիշտի>> համատիրությունից համապատասխան հարցմամբ պահանջվել են համատիրության կանոնադրության պատճենը, վերելակի անվտանգ աշխատանքի պատասխանատուներ Գուրգեն և

Արմեն Վարդանյանների աշխատանքային պայմանագրերի պատճենները, ինչպես նաև Երևան քաղաքի Խաղխաղ Դոն փողոցի 23-րդ շենքի 1-ին մուտքի վերելակի վերաբերյալ առկա բոլոր փաստաթղթերի պատճենները:

<<Արգիշտի>> համատիրության և <<Տեխնիկական փորձաքննության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի միջև 05.10.2016թ. կնքված պայմանագրով փորձաքննության կատարման ժամկետները պարզելու նպատակով հարցմամբ պահանջվել են նաև հանգամանքները հիմնավորող փաստաթղթերի պատճենները, լրացուցիչ հարցաքննվել են <<Արգիշտի>> համատիրության նախագահը, վերելակը վերանորոգող մասնագետները, ստացվել են պահանջվող փաստաթղթերի պատճենները, դրանք զննվել և կցվել են քրեական գործին:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք էական նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ և 251-րդ հոդվածի 2-րդ մասի հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1) Սույն քրեական գործով նշանակել լրացուցիչ դատատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել փորձագետ Ավգեն Արմենակի Գասպարյանին՝ վերջինիս նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2) Փորձագետի լուծմանն առաջադրել ներքոհիշյալ հարցերը՝

- Երևան քաղաքի Խաղաղ-Դոնի 23-րդ հասցեում առկա վերելակը գործարանային արտադրության է, թե՝ ոչ, եթե այո ինչ ապրանքանիշի է, որ երկրի և տարեթվի արտադրության, որքան ժամանակ է տեղադրված եղել:
- 2016թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ և զննության պահին պիտանի եղել է նպատակային շահագործման համար, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչպիսի թերություններ է ունեցել, ինչի հետևանքով են դրանք առաջացել /գործարանային թերություններ են, տևական շահագործման հետևանքով առաջացած, կամ սխալ շահագործման հետևանքով առաջացած/:
- Կան արդյո՞ք վերելակի կառուցման, տեղադրման կամ շահագործման մեջ սխալներ, թերություններ, համապատասխանում է արդյոք այն տեղադրման ու շահագործման համար նախատեսված ստանդարտներին /պահանջներին/, թե՝ ոչ, որոնք են շեղումները և ում կողմից են դրանք թույլ տրվել:
- Եթե կան թերացումներ /սխալներ/, ապա դրանք գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ տեղի ունեցած միջադեպի հետ, թե՝ ոչ:
- Սույն դեպքով տեխնիկայի անվտանգության կանոնների խախտումներ թույլ տրվել են, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի և ում կողմից, տվյալ պահին

ով էր պարտավոր պահպանելու այդ կանոնները և ով է հանդիսացել պատասխանատու անձը:

- Կա արդյո՞ք պատճառահետևանքային կապ անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումների և Ռիտա Դոդորյանի, Մարինե Վարդանյանի կողմից մարմնական վնասվածքներ ստանալու միջև:
- 2016թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ և զննության պահին վերելակի դռների էլեկտրական բլոկավորման հպակների վիճակի հսկման ռելեն և դրա շղթան եղել են սարքին կամ խափանված, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի թերություններ են հայտնաբերվել և ինչի արդյունքում են դրանք գոյացել:
- Ով կամ ովքեր են պատասխանատու վերելակի դռների էլեկտրական բլոկավորման հպակների վիճակի հսկման ռելեյի և դրա շղթայի սարքին լինելու համար, և տվյալ դեպքում, երբ է վերանորոգվել կամ փոխվել ռելեն և դրա շղթան:
- Վերելակի սպասարկումն իրականացնող մասնագետների կողմցի չէին կարող արդյո՞ք տեսնել ռելեյի հետագա շահագործման անթույլատրելիությունը:
- Արդյո՞ք անվտանգության պահանջներին չհամապատասխանող ծառայության մատուցում չի փորձաքննության կատարումը՝ նախորդ փորձաքննության կատարումից մեկ տարի անց, հաջորդ փորձաքննության իրականացումը:

3) Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք կարևոր նշանակություն կունենան դեպքի իրական հանգամանքները և որպես մեղադրյալ ենթակա անձի արարքը որակելու համար և կմտնեն փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

4) Փորձագետին տրամադրել սույն որոշման օրինակը, իսկ դեպքի վայրը քրեական գործի նյութերը կտրամադրվել համապատասխան միջնորդությամբ:

Ավագ քննիչ Ա.Մ.Մաթևոսյան